ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 01

2024 թվականի հունվարի 30-ին «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» № ՍՊԴ 17-2024 պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու վերաբերյալ

ք. Երևան *«29» 03 2024թ.*

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հակադոպինգային գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս տնօրեն՝ Դավիթ Մոսինյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով սպորտի քաղաքականության վարչության 2024 թվականի մարտի 26-ի Ն/31.1/6805-2024 զեկուցագիրը և 2024 թվականի հունվարի 30-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» №ՍՊԴ 17-2024 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 9.1-րդ կետը՝ Պայմանագրի Կողմերը համաձայնվեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1.1.1 Պայմանագրի 2-րդ կետի 2.4.4-րդ ենթակետում «70%» թիվը փոխարինել «180» թվով:

1.1.2 Պայմանագրի 2-րդ կետի 2.4.14-րդ ենթակետը «հրահանգների» բառից հետո լրացնել «,«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից:

2.2 Սույն համաձայնագիրը Պայմանագրի անբաժանելի մասն է:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով՝ երկու օրինակից, կնքված է, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հակադոպինգային գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք	ք. Երևան, 0054, Մամիկոնյան փ./51
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900011036663	Հ/Հ՝900018001777
ՀՎՀՀ՝ 02698732	ՀՎՀՀ՝ 01837784
Գլխավոր քարտուղար՝	էլ. փոստ՝ armgymnastic@mail.ru
	Տնօրեն՝
_____ Հ.Հակոբյան	_____ Դ.Մոսինյան
Կ. S.	Կ. S.